

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ

(1197—1271)

Փ. Փ. ԱՆԹԱԲՅԱՆ

1

Վարդան Արևելցին հայ միջնադարյան մշակութի կարկառուն դեմքերից մեկն է իբրև մատենագիր, գիտնական, պատմագիր, աշխարհագրագետ, փիլիսոփա, դրող, թարգմանիչ, մանկավարժ և ազգային-հասարակական գործիչ:

Ծնվել է շուրջ 1197—1200 թթ. Գանձակի գավառում: Այստեղ էլ ստացել է իր նախնական կրթությունը: Հավանական է, որ նա կարճ ժամանակով ուսանել է նոր Գետիկ վանքում XII—XIII դդ. հռչակավոր հայ իրավագետ, գիտնական Մխիթար Գոշի (1130—1213 թթ.) մոտ: Այնուհետև հիմնական կրթություն է ստացել Տավուշ գավառի Խորանաշատ վանքում՝ ուսուցչապետ ոմենակալով XIII դարի անվանի գիտնական-մանկավարժ Հովհաննես Վանականին: Դեռ ուսանողական տարիներին նա հորինել է մանր երկեր և թարգմանություն է կատարել հունարենից<sup>1</sup>:

Նա մանկավարժական լայն գործունեություն է ծավալել: Կայենաբերդի Ս. Անգրեի վանքում հիմնել է դպրոց, ուր և գասավանդել է մոտավորապես 1235—1239 թթ. և 11—12 տարվա ընդմիջումից հետո՝ 1251—1255 թթ.: Մանկավարժական աշխատանքին զուգահեռ նա այստեղ շարադրել է իր արժեքավոր աշխատություններից մի քանիսը, որոնց թվում՝ «Մեկնութիւն Հնգամատենին» կրօնա-փիլիսոփայական ստվար երկը, ներբողներ ու ճառեր:

Ենթադրվում է, որ Վ. Արևելցին ապրել և գործել է նաև ուսումնագիտական խոշոր կենտրոն Հաղբատի վանքում:

1239 թ. վերջին կամ 1240 թ. սկզբին ուխտագնացության է մեկնել Երուսաղեմ: Վերադարձին Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի (1221—1267 թթ.) թելադրանքով մնացել է Կիլիկիայում մինչև 1245 թ.: 1246 թ. վերստին եկել է Հայաստան, ապա 1248 թ. վերադարձել Կիլիկիա և այնտեղ անցկացրել ևս 3—4 տարի:

Վ. Արևելցու գործունեությունը Կիլիկիայում ծավալվել է երկու հիմնական շավղով՝ մշակութային-գրական և հասարակական-եկեղեցական, երկու դեպքում էլ՝ արդյունավետ և օգտակար: Այստեղ Հեթում Ա թագավորի խընդրանքով նա հորինել է հայ մատենագրության չափազանց հետաքրքիր ստեղծագործություններից մեկը՝ «Ժղլանք» ժողովածուն, ինչպես նաև՝ «Յաղագս

<sup>1</sup> Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2166, էջ 317ր:

մեկնութեան քերականին», Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի երկու շրջաբերական թղթերը և ներբողներ, ինչպես նաև զբաղվել է թարգմանությամբ:

Նա Կիլիկիայում եղել է արքունիքին և կաթողիկոսարանին շատ մոտ կանգնած հեղինակավոր անձնավորություն՝ ուսուցիչ ու խորհրդական: Ղեկավար մասնակցություն է բերել աղգային-եկեղեցական, նաև քաղաքական կարևոր նշանակություն ունեցող ժողովներին և Բյուզանդիայի ու Վատիկանի հայերի հանդեպ վարած թշնամական քաղաքականության դեմ մղվող հայրենասիրական պայքարին:

Վ. Արևելցու կյանքի վերջին մեկնակես տասնամյակը անցել է խոր Վիրապի վանքում: Այստեղ հիմնել է միջնադարյան բարձրագույն դպրոց, ուր ուսումնառության էին գալիս ոչ միայն բուն Հայաստանից, այլև հեռավոր հայկական Կիլիկիայից: Շատ են նրա երևելի սաները, որոնց շարքում՝ անվանի բանաստեղծ, գիտնական ու մատենագիր Հովհաննես Երզնկացին (1230—1293), գիտնական-վարդապետ Գեորգ Սկեռացին (1246—1301), Գլաձորի համալսարանի հիմնադիր Ներսես Մշեցին (մահացած 1284 թ.):

Խոր Վիրապում է առանձնապես աշխուժացել ու հասունացել Վ. Արևելցու մատենագրական, հասարակական ու մանկավարժական գործունեությունը: Այստեղ է նա գրել իր «Մեկնութիւն Դանիէլի», «Հաւաքումն պատմութեան», «Աշխարհացոյց» ծավալուն ու արժեքավոր երկերը, ինչպես նաև՝ մի քանի ձառ, խրատ, զրույց և շարական: Լստ երևույթին, այստեղ է խմբագրել ու սեփական ձառերով լրացրել հայ եկեղեցու ուշագրավ ծիսական ժողովածուներից մեկը՝ «Տօնապատճառը»:

Վ. Արևելցու աղգային-հասարակական գործունեության ամենաակնառու դրվագներից է նրա 1264 թ. առաքելությունը դեպի Քալիփ՝ Հուլավու զանի մոտ, որի կողմից ընդունվել է բացառիկ պատվով ու սիրալիրությամբ: Իր նուրբ քաղաքականության շնորհիվ Հուլավուից ստացել է հատուկ «առլեխ» (արտոնագիր), որտեղ մոնղոլ իշխանավորներին հրամայված էր Հայաստանի բնակչությանը մեղմ վերաբերվել՝ հատկապես հարկային քաղաքականության ասպարեզում: Բացի այդ, նրան նույնիսկ իրավունք է տրվում նույն «առլեխի» մեջ ավելացնելու ինչ որ ինքը կամենար: Սա բացառիկ վստահություն էր, նաև շատ օգտակար շնորհ, քանի որ Վ. Արևելցին այն հայրենասեր գործիչն էր, ուր այդ նույն զանի առաջարկած «ոսկուց», «ոսկեղեն» ղեկստից հրաժարվել էր աշխարհի խաղաղության՝ «ողորմության» համար<sup>2</sup>:

Նա մահացել է 1271 թ. Խոր Վիրապում և այնտեղ էլ թաղվել:

## 2

Վ. Արևելցին այն սակավաթիվ միջնադարյան գործիչներից է, որը դեռևս իր կենդանության ժամանակ լայն ճանաչման ու համբավի էր արժանացել: Նրան անվանել են «նոր լուսաւորիչ», «եռամեծ», «արդիւնական»: Բաղմասկի ձեռագիր ընդօրինակությունների են արժանացել նրա երկերը, որոնք շատ են, մեծածավալ և բնույթով՝ բաղմաղան: Դրանք հիմնականում բաժանվում են հետևյալ խմբերի.

1. Մանր երկեր.

<sup>2</sup> «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 158—159:

2. Կանոնագրական բնույթի գործեր.
3. Մեկնություններ.
4. «Ժղլանք».
5. Քերականական երկեր.
6. Աշխարհացոյց.
7. Հաւարումն պատմութեան.
8. Թարգմանություններ:

Մանր երկերը, որոնց առնչությամբ հատկապես բանասիրական քննության կարոտ բավականաչափ խնդիրներ կան, ունեն նշանակալից գաղափարական ու գեղարվեստական արժեք և բավական մեծ թիվ են կազմում՝ 8 ներքող, 16 ճառ, 2 խրատ, 6 շարական, շուրջ 70 մանր վրույց և մի քանի աղոթք: Ներքողների մեջ հեղինակը արժարժել է ազգային-հասարակական հարցեր: Քաջածանոթ լինելով հայ ժողովրդի անցյալին և միջնադարի պատմա-քաղաքական պայմաններին ու ազգային-հասարակական հոգեբանությանը՝ Վ. Արևելցին իր ներքողներն օժտել է սոցիալ-քաղաքական իրատեսությամբ և հայրենասիրական ակնկալություններով: Այս առումով հատկանշական են առանձնապես Գրիգոր Լուսավորչին, նրա որդիներին ու թոռներին և «Դրերի գյուտին» նվիրված ներքողները<sup>3</sup>: Սրանց մեջ շատ են Հայաստանի երբեմնի պետական հզոր իշխանության առանձին իրադարձությունների ու ներկայացուցիչների վկայակոչումները՝ հատկապես ռազմաքաղաքական և մշակութային, հոգևոր ոլորտներից: Մեծ ոգևորությամբ ու երախտագիտությամբ է հիշում նաև հայոց գրերի դյուտը, նրա հանձարեղ հորինող Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթևին, Վռամշապուհ թագավորին, հայ դպրության անդրանիկ մշակներին՝ թարգմանիչներին:

Վ. Արևելցին միաժամանակ վրդովվում ու ցավում է Հայաստանի երբեմնի բարգավաճ պետական իշխանության, զինվորական ուժի, ազգային ինքնուրույնության և հոգևոր կյանքի կորստյան համար:

XIII դարի համահայկական պատմա-քաղաքական վիճակի իրատես վերլուծությունները Վ. Արևելցու համար ինքնանպատակ չեն եղել: Նա կամեցել է, որ իր ժամանակակիցները պահեն իրենց ազգային ինքնագիտակցությունն ու արժանապատվությունը, կորած պետականության վերականգնման հույսը և ամուր կապվեն իրենց մշակութային-հոգևոր կյանքին: Նա ուղղակի կոչ է անում հայ ժողովրդին. «Ծանիր վլաութիւն քո»: Ավելին հնարավոր էլ չէր այդքան խառն ու խառվար ժամանակներում:

Վ. Արևելցու ճառերն ու խրատները հիմնականում առնչվում են քրիստոնեական ուսմունքի տեսական ու գործնական խնդիրներին, ծիսական ու կրոնա-վարչական հարցերի լուսաբանմանը: Դրանք բավական հստակ պատկեր են տալիս հեղինակի գիտական զինվածության ու աշխարհայացքի մասին, հետաքրքիր և արժեքավոր նյութ են մատակարարում միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու իրավական հարաբերությունների, մասամբ քաղաքային կյանքի և կենցաղային սովորույթների վերաբերյալ: Ըստ այսմ էլ դրանց պատմա-ճանաչողական արժեքը ակներև է: Նրա շարականները թեպետ հոգևոր-եկեղեցական երգեր են, կատարվել են բացառապես եկեղեցական շրջանակներում, սակայն դրանց մեջ արժարժված խնդիրները զգալիորեն բը-

3 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8775, էջ 221ա—319ա:

խում են ազգային ակունքներից: Նշելի է հատկապես հայ դպրության մշակներին՝ թարգմանիչներին, նվիրված «Որբ զարդարեցին» շարականը:

Նրա զրույցները երկու հիմնական ենթախմբի են բաժանված՝ բուն հայկական (8 զրույց) և արևելյան քրիստոնեական, բայց մասամբ հայացված միջավայրով ու կենցաղավարությամբ (61 զրույց), երկու դեպքում էլ՝ իր կողմից միայն մշակված և վերափոխված: Սույն զրույցների համար հատկանշականը կենցաղային, գեղարվեստական և լեզվա-ոճական կողմն է, երբեմն բավական հետաքրքիր:

Ընչ վերաբերում է աղոթքներին, պետք է ասել, որ դրանք արժանի են ուշադրության իրենց անկեղծությամբ և բանաստեղծական շնչով:

Կանոնադրական բնույթի մի քանի մանր երկ է մեզ հասել նրա հեղինակությամբ, թեև ոչ պարզորոշ իր անունով: Դրանցից են Կոստանդին Բարձրբեդցի կաթողիկոսի վերոնշյալ երկու շրջաբերական թղթերը և Ջադս-վանից ժողովի կանոնները: Անտարակույս, նա մաս ունի նաև Սսի 1252 թ. ժողովի կանոնների մշակման գործում: Ակներև է դրանց պատմա-ճանաչողական արժեքը, միջնադարյան հայ հասարակական ու ներքին կյանքի, կենցաղի ու ազգագրական վիճակի ուսումնասիրության համար ունեցած նշանակությունը:

Վ. Արևելցու մատենադրական ժառանգության ծանրակշիռ մասը նրա մեկնաբանական ծավալուն աշխատություններն են: Դրանք նվիրված են Հին Կտակարանի գրքերի բովանդակության բացահայտմանը: Նրա այս երկերը առավելապես տեսական բնույթի են: Այստեղ առատ նյութ կարելի է գտնել բնափիլիսոփայական, սոցիալ-տնտեսական խնդիրների, բուսական ու կենդանական աշխարհի, հայ ժողովրդի միջնադարյան կյանքի ու կենցաղի, հոգեբանություն, ըմբռնումների, հոգևոր և մշակութային իրադրության վերաբերյալ: Մեր կարծիքով, առավելապես այս երկերում է հստակ երևում միջնադարյան հայ մտածող գիտնականի հմտությունն ու լայն պատրաստությունը: Հիշյալ երկերի ուսումնասիրությունը ունի նաև գրականագիտական, բանասիրական և աղբյուրագիտական հետաքրքրություն ոչ միայն հայ, այլև անտիկ հունական, ասորական և բյուզանդական գրականության պատմության համար:

Նրա զրչին է պատկանում չափազանց ուշադրավ մի ժողովածու, որի հեղինակային բնորոշումն ու ընդհանուր բովանդակությունը նկատի ունենալով՝ բանասիրության մեջ կոչել են «Ժղլանք» (ժողովրդական ժղլն՝ զրուցել խոսքից)<sup>4</sup>: Իրապես էլ այն, ասես, մի ընդարձակ զրույց է ընթերցողի, տեղյալ դեպքում՝ թագավոր Հեթում Ա-ի հետ ժամանակակից հայ մարդուն հետաքրքրող հարցերի մասին: Իսկ այդ հարցերը շատ բաղմաղան են: Դրանք տառնչվում են բնությանը, երկնային մարմինների կազմությանն ու շարժումներին, մարդկային կյանքի ու բուսական աշխարհի որոշ բնագավառների զարգացմանը, շարժման ու դադարի փոխադարձ կապերին, կրոնագիտությանը, արվեստին՝ հատկապես երգեցողությանը, հայ և այլ ժողովուրդների մշակութային ու մասամբ՝ բանահյուսական առնչակցություններին, հայկական հին նշանագրերին, գրերի գյուտին, բերականագիտությանը և քաղաքական-հասարակական խնդիրներին:

<sup>4</sup> Ձևագրերում ունի հետևյալ վերնագիրը. «Լուծմունք ի Ս. Դրոց վարդանայ վարդապետի ի խնդրոյ բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթումոյ», Մատենադարան, ձև. № 750, լջ 1ա:

Վ. Արևելցին հիմք է ունեցել իրեն նախորդած հայ և օտարազգի, հատկապես հունական, բյուզանդական ու ասորական կրոնական և աշխարհական մտածողների գիտելիքներն ու տեսությունները, սակայն նվազ ուշագրավ չէ և իր սեփական բաժինը, որը նրան դեռևս իր ժամանակակիցների աչքին դարձրել էր «եռամեծ»։ Այս երկում ի հայտ է գալիս նաև հմուտ մանկավարժը, գրողը, լեզվաբանը, աղգային արժանապատվությամբ և հայրենասիրությամբ տոգորված Հայաստանի բաղաբացին։

Նա միջնադարյան Հայաստանի առավել գիտակ և ուշագրավ քերականագետներից է։ Նրանից մեկ է հասել այս բնագավառի երկու աշխատություն՝ «Վասն բանին մասանց», որը վերահիշյալ «Ժղլանք» ժողովածուի շուրջ 70 նյութերից մեկն է, և «Մեկնութիւն բերականին»։ Առաջինը, թղթակից-անդամ Դ. Զահուկյանի եզրակացությամբ, «հայոց լեզվի համառոտ շարահյուսության նախատիպն է», «...ցույց էր տալիս այն փաստի գոյությունը, որ հայերի մոտ հասունացել էր լեզվի ուսումնասիրությունը որպես առանձին գիտելիքի առանձնացնելու պահանջը՝ որպես այդ բնագավառում զգալի նյութի կուտակման արդյունք»<sup>5</sup>։

Ի տարբերություն նախորդ հայ քերականագետների, Վ. Արևելցին որոշ առումով նորարար է ոչ միայն հայերենի շարահյուսությունը առաջին անգամ քննության նյութ դարձնելու, այլև այն բանի համար, որ իր շարադրանքը պարզ ու դյուրըմբռնելի է, համեմված է ժողովրդական միջավայրից առնված օրինակներով, առականերով ու զրույցներով, լեզուն վճիտ է և զրեթե խոսակցական։

Երկրորդը, որն ավելի ամբողջական ու ծավալուն է, Հեթում Ա. թագավորի պատվերով է շարադրված։ Այստեղ ավելի ավարտուն է նրա քերականագիտական խոսքը, հանգամանորեն մեկնաբանված է հույն հռչակավոր քերականագետ Դիոնիսիոս Թրակացու (II դ. մ. թ. ա.) «Քերականության» հայերեն թարգմանությունը։ Թե քերականագիտական ո՞ր կարգի մասին ի՞նչ տեսակետ է նա դարգացնում, մեր այս սեղմ խոսքի սահմաններից դուրս ենք համարում, ասենք միայն, որ նա այս երկում ևս իրազործել է շատ մատչելի շարադրանք, հստակ ու պարզ լեզու, բերված բացատրական օրինակները շոշափելի և անմիջական են։ Ինչպես ժամանակին նկատվել է, Արևելցին Դ. Թրակացու խոսքը մեկնաբանելիս, ասես, ոչ թե նրա՛, այլ ի՛ր սեփական տեսակետներն է բացատրում ու ներկայացնում ընթերցողին, այսպիսով ավելի խնայուն է դարձնում իր երկը։ Վ. Արևելցին այստեղ շատ ուշագրավ փաստեր է հաղորդում հայերեն բարբառների մասին, նրանց ուսումնասիրության համար օգտակար նյութ մատակարարում։ Հետաքրքիր է, որ հայերենում երկակի թվի չգոյության փաստը նա իրավացիորեն բացատրում է հայերենի «փարթամությամբ», որն, անշուշտ, կարևոր նկատառում է լեզվագիտության տեսանկյունից։ XIII դարի համար գիտական և առաջադիմական կարևոր նվաճում էր և այն, որ նա դեռևս կաղամավորվող աշխարհաբար հայերենը հավասարազոր էր համարում դասական հայերենին։ Սույն աշխատությունը արժեքավոր է նաև զրականագիտության, զրականության տեսության բնագավառի ուշագրավ նյութերով։

«Աշխարհացոյցը» նույնպես Վ. Արևելցու առավել արժեքավոր երկերից է։ VII դարի համանուն մի այլ երկից հետո իր ընդգրկումով և նշանակությամբ

<sup>5</sup> Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 253, 249։

սա երկրորդն է այդ բնագավառի ողջ հայ գրականության մեջ: Այն պահպանվել է երկու՝ համառոտ և ընդարձակ խմբագրությամբ: Թեև սեղմ և սուղ են հաղորդած տեղեկությունները, բայց շնորհիվ տեղագրական լայն և ընդարձակ «հարցակարգի», հիշյալ տեղեկությունները բազմաթիվ են և արժեքավոր: Դրանք ոչ միայն աշխարհագրական-տեղագրական բնույթի են, այլև պատմական, գիտա-մշակութային, մասամբ նաև տնտեսական և աղագրական հետաքրքրություն են ներկայացնում: «Աշխարհացոյցում» պատմվում է հին և տվյալ ժամանակի Հայաստանի աշխարհագրական վիճակի, վարչա-տերիտորիալ բաժանումների, այսպես կոչված՝ գավառական տեղաբաշխման, դրանց սահմանների, քաղաքների, ավանների, գյուղերի, վանքերի տեղագրության և այլ հարակից բնագավառների մասին: Կարևոր է տեղանունների հին և նոր փոփոխությունները մատնացույց անելու հեղինակի գիտակցված դիտավորությունը, որը շատ օգտակար է պատմա-աշխարհագրական և հնագիտական տարբեր ժամանակաշրջանների վերաբերյալ հարցեր քննելիս: Այս երկը ուշագրավ է նաև այն առումով, որ բազմաթիվ այլ երկրների մասին ևս այնտեղ օգտակար խոսք է ասվում և պատկերացում է տրվում միջնադարում այս բնագավառում հայերի ունեցած իմացության մասին:

Սույն աշխատությունը շարադրելիս Արևելցին նկատի է ունեցել օտարազգի և հայ համապատասխան հեղինակների աշխատությունները, ինչպես նաև ժողովրդական պատումներ և զանազան բանավոր վկայություններ: Այս առումով նվազ օգտակար չի եղել և այն հանգամանքը, որ նա իր գործունեության բերումով շատ է շրջագայել Հայաստանում և նրա սահմաններից դուրս:

«Աշխարհացոյցի» գիտական, բանասիրական հետազոտությունը դեռ ավարտված չէ և տարակույս չկա, որ դրա մասին նոր խոսք կասվի:

Հայ մատենագրության և աղբյուրագիտության պատմության մեջ «Հաւաքումն պատմութեանը» ընդունված է համարել Վ. Արևելցու լավագույն երկը: Այս գնահատականը, անշուշտ, հիմնականում ճիշտ է, սակայն հիշյալ երկը, մեր կարծիքով, հեղինակի հնարավորությունների, հմտության և պատմագիտական հայացքի լրիվ ցուցանիշը չէ: Այս ավելի քան համոզիչ է դառնում, երբ խորամուխ ենք լինում նրա մատենագրական ողջ ժառանգության համակողմանի քննությանը: Փաստերը ցույց են տալիս, որ նա իր սույն երկը վերանայելու և վերամշակելու առիթ ու ժամանակ չի ունեցել:

Վ. Արևելցին միջնադարյան պատմագրական որոշ ավանդույթի համապատասխան իր երկն սկսել է արարչագործությունից և Աղամ-Նվալից: Մինչև իր ապրած տարիների պատմական անցուղարձերը նա շարադրել է ըստ հայ (Կորյունից՝ V դ. մինչև Կ. Գանձակեցի՝ XIII դ.), երբեմն նաև օտարազգի հեղինակների հաղորդումների, թեև ոչ նույն ձևով և ոչ միշտ միևնույն մեկնություններով: Նա դիմել է վիճական արձանագրություններին, երբեմն՝ դիվանական փաստաթղթերին, ժողովրդական բանավոր պատումներին, այդ թվում նաև քաղղեական, ասորական, պարսկական ղրույց-առասպելներին: Այսպիսով, այն մասամբ ստացել է համահավաք աշխատության կառուցվածք ու բովանդակություն, պահպանել է որոշ սկզբնաղբյուրների համար բնագրային, երբեմն ուշագրավ այլ ընթերցումներ, ստեղծել է փաստագրական բնույթի որոշ տարբերակներ, որոնք հետաքրքիր են ինքնին և առանձին դեպքերում՝ նույնիսկ ավելի ճշգրիտ: Այս հանգամանքը, որոշ առումով, բարեբար ազդեցություն է ունեցել երկի շահեկանության վրա: Իսկ XII դարի վերջերի և XIII դարի դեպի-

քերը գրի է առել մեծ մասամբ ինքնուրույն՝ որպես ականջալուր, ականատես և մասնակից հեղինակ, որով և դրանք սույն երկի հիմնական արժեքավոր մասն են կազմում:

«Հաւաքումն պատմութեանը» աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունի: Հարուստ, բազմազան և ճշգրիտ տեղեկություններ է հաղորդում հայ և անդրկովկասյան ժողովուրդների, Կիլիկիայի հայկական թագավորության, պարսիկների, բյուղանդացիների, արաբների, սելջուկների, խաչակիրների, եգիպտական մամելուկների, մոնղոլների և թուրքմենական ցեղերի պատմական անցյալի մասին: Նշելի է, անշուշտ, որ դրանք սոսկ ռազմա-քաղաքական իրադարձություններին չեն առնչվում, այլև ընդգրկում են տեղագրական, տնտեսական, սոցիալական, առևտրական, մշակութային և ազգագրական ոլորտները, ըստ այդմ էլ առավել բարձրարժեք են դառնում: Շատ հետաքրքրական է հեղինակի Հուլավու դանի հետ ունեցած վերոհիշյալ հանդիպման մասին պատմող դրվագը: Դրա կապակցությամբ հաճախ է խոսք եղել ոչ միայն որպես հայրենասիրական-գաղափարական, այլև գրական-գեղարվեստական և լեզվա-ոճական ուրույն նշանակություն ունեցող հատվածի: Եվ դա իրավացի է: Միաժամանակ հարկ է նշել, որ «Հաւաքումն պատմութեան» նշանակալից աշխատությունը, դժբախտաբար, որպես պատմական սկզբնաղբյուր չունի կուտ, հետևողական կառուցվածք, հազվադեպ է այստեղ բացահայտված պատմական դեպքերի ու երևույթների ներքին պատճառական կապը, նկատելի պարզամտություն ու պարզունակություն կա, քիչ է երևում հեղինակը, որպես ժամանակաշրջանի առաջատար մտածող, իր պատմագիտական սկզբունքով:

Բավականաչափ արդյունավետ է եղել Վ. Արևելցու թարգմանչական գործունեությունը: Մեր պատմա-բանասիրական քննությունները մեկ անգամ ևս հաստատում են, որ նա թարգմանել է բազմաթիվ հրաշապատում զրույցներ, մի ճառ հունարենից, մի քանի այլ ձառեր ասորի անվանի եկեղեցական-հասարակական գործիչ Հակոբ Սրճեցու (VI դ.) մատենագրությունից: Նա մեծ օժանդակություն ու բաժին ունի նաև առավել անվանի մի այլ ասորի մատենագրի՝ Միխայիլ պատրիարքի (XII դ.) «Ժամանակագրութիւն» պատմագրական կարևոր աշխատության հայերեն թարգմանության գործում (թարգմանիչ՝ Բշոխ քահանա): Արևելցու կողմից սույն թարգմանությանը կցված հիշատակարանը ինքնին ուրույն մի պատմական սկզբնաղբյուր է, որը հարստացնում ու լրացնում է հիշյալ «Ժամանակագրութեան» մասնավորաբար Կիլիկյան հայկական թագավորության պատմությանն առնչվող կարևոր հաղորդումները:

Վ. Արևելցին, անտարակույս, միջնադարյան հայ քաջահմուտ մատենագիրներից է, բեղմնավոր գիտնական, եռանդուն մշակութային ու հասարակական գործիչ և հայրենասեր քաղաքացի:

#### ВАРДАН АРЕВЕЛЦИ

(1197—1271)

П. П. АНТАБЯН

(Резюме)

Статья посвящается жизни и творчеству Вардана Аревелци (XIII в.), считающегося одним из плодотворных представителей книжной словесности, имеющего большое количество объемистых и малых тру-

дов по истории армянского народа, географии Армении, армянского языка и грамматики, философии, космографии и другим отраслям науки и культуры.

Эти труды представляют большую историческую, социально-экономическую, общественную, бытовую, этнографическую, топографическую, натурфилософскую, грамматическую, музыковедческую и литературоведческую ценность. Его шараканы (гимны), беседы, панегирики по своему общественно-идеологическому содержанию и языково-стилистическим особенностям являются интересными произведениями средневековой армянской художественной литературы.

Произведения религиозного характера достойны внимания для изучения истории развития средневековой армянской философской и научной мысли.

Вардан Аревелци в то же время вел широкую педагогическую деятельность, руководя средневековыми высшими учебными заведениями. Многие из его учеников стали видными представителями армянской культуры и словесности.

Не менее значительна также его национально-общественная деятельность. Он был горячим патриотом, жившим общественно-политическими интересами и жизнью своего народа.